ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2023

ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ (ԴԱՍՎԱՐ)

ԹԵՍՏ 1

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ	
ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ	

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 **<<Մայրենիի>> դասերի ընթացքում կիրառվող կարդալու տեսակների համարների ո՞ր դասավորությունն է համապատասխանում ճիշտ քայլաշարի հերթականությանը: *(1 միավոր)***

1) I. կարդալ շարունակելով, II. կարդալ կանգառներով / մեկնաբանելով/, III. կարդալ ընտրովի, IV. կարդալ դերերով
2) I. կարդալ կանգառներով / մեկնաբանելով/, II. կարդալ շարունակելով, III. կարդալ դերերով, IV. կարդալ ընտրովի
3) I. կարդալ շարունակելով, II. կարդալ դերերով, III. կարդալ ընտրովի, IV. կարդալ կանգառներով / մեկնաբանելով/
4) I. կարդալ ընտրովի, II. կարդալ դերերով, III. կարդալ կանգառներով/ մեկնաբանելով/, IV. կարդալ շարունակելով

2 **<<Մայրենիի>> դասերի ընթացքում կարդացած ստեղծագործության շուրջ իրականացվող բառային աշխատանքի տրված 4 քայլաշարից ո՞րն է ճիշտ: *(1 միավոր)***

1) I. անծանոթ բառերի բացահայտում, II. ուղղագրական արժեք ներկայացնող բառերի ուղղագրության դիտարկում, III. անծանոթ բառերի իմաստների բացատրում, IV. նորածանոթ բառերի ակտիվացում
2) I. անծանոթ բառերի բացահայտում, II. անծանոթ բառերի իմաստի բացատրություն, III. ուղղագրական արժեք ներկայացնող բառերի ուղղագրության դիտարկում, IV. նորածանոթ բառերի ակտիվացում
3) I. անծանոթ բառերի բացահայտում, II. ուղղագրական արժեք ներկայացնող բառերի ուղղագրության դիտարկում, III. անծանոթ բառերի իմաստի բացատրություն, IV. նորածանոթ բառերի ակտիվացում
4) I. ուղղագրական արժեք ներկայացնող բառերի ուղղագրության դիտարկում, II. անծանոթ բառերի իմաստի բացատրություն, III. նորածանոթ բառերի ակտիվացում, IV. անծանոթ բառերի բացահայտում

3 **Շարադրություն գրելու՝ կրտսեր դպրոցականի կարողության զարգացմանը միտված հետևյալ 5 քայլերի ո՞ր հերթականությունն է արտահայտում քայլաշարի ճիշտ հաջորդականությունը:** ***(1 միավոր)***

1) I. շարադրության թեմայի որոշում, II. շարադրության վերնագրի ընտրություն, III. շարադրության թեմայի վերաբերյալ նյութերի հավաքում, IV. աշխատանք շարադրության բառապաշարի շուրջ, V. շարադրության պլանի կազմում
2) I. շարադրության թեմայի որոշում, II. շարադրության վերնագրի ընտրություն, III. շարադրության պլանի կազմում, IV. շարադրության թեմայի վերաբերյալ նյութերի հավաքում, V. աշխատանք շարադրության բառապաշարի շուրջ
3) I. շարադրության վերնագրի ընտրություն, II. շարադրության թեմայի որոշում, III. աշխատանք շարադրության բառապաշարի շուրջ, IV. շարադրության պլանի կազմում, V. շարադրության թեմայի վերաբերյալ նյութերի հավաքում
4) I. շարադրության թեմայի որոշում, II. շարադրության թեմայի վերաբերյալ նյութերի հավաքում, III. աշխատանք շարադրության բառապաշարի շուրջ, IV. շարադրության վերնագրի ընտրություն, V. շարադրության պլանի կազմում

4 **ԽԻԿ համակարգով կազմակերպվող մայրենիի համակցված դասին ներկայացված հետևյալ 4 քայլերի ո՞ր հերթականությունն է արտահայտում քայլաշարի ճիշտ հաջորդականությունը:** ***(1 միավոր)***

1) I. բառային աշխատանք, II. կարդալ, III. պատմել, IV. աշխատանք բնագրի շուրջ
2) I. կարդալ, II. բառային աշխատանք, III. աշխատանք բնագրի շուրջ, IV. պատմել
3) I. կարդալ, II. աշխատանք բնագրի շուրջ, III. բառային աշխատանք, IV. պատմել
4) I. կարդալ, II. պատմել, III. բառային աշխատանք, IV. աշխատանք բնագրի շուրջ

5 **Փոխադրության տեսակների ո՞ր խմբում չկա տարրական դպրոցում չկիրառվող տեսակի անվանում: Նշել այդ խմբի համարը:** ***(1 միավոր)***

1) համառոտ փոխադրություն, ընդարձակ փոխադրություն, ընտրովի փոխադրություն, բնագրին հարազատ կամ մանրամասն փոխադրություն
2) ստեղծագործական փոխադրություն, ընտրովի փոխադրություն, բնագրին հարազատ փոխադրություն, որպես մասնակից փոխադրություն
3) բնագրին հարազատ կամ մանրամասն փոխադրություն, համառոտ փոխադրություն, ընտրովի փոխադրություն, ստեղծագործական փոխադրություն
4) որպես ականատես փոխադրություն, ընտրովի փոխադրություն, բնագրին հարազատ փոխադրություն, ստեղծագործական փոխադրություն

6 **Ըստ <<Մայրենիի>> մեթոդիկայի՝ տրված տարբերակներից որո՞ւմ նշվածներից ոչ բոլորը կարող են լինել շարադրության վերնագրեր՝ տարրական դասարանների աշակերտների համար:** ***(1 միավոր)***

1) <<Մի անգամ սեպտեմբերի մեկին>>, <<Մեր բակի բնակիչները>>, <<Աշխատասիրություն>>, <<Առվակը>>
2) <<Ինչպես եմ օգնում մայրիկիս>>, <<Մեր դպրոցի առօրյան>>, <<Իմ կիրակնօրյա հոգսերը>>, <<Գարունն իմ սենյակի պատուհանից>>
3) <<Իմ դպրոցի ճամփան ձմռանը>>, <<Իմ շնիկը>>, <<Իմ սիրելի հերոսը>>, <<Մեր դասարանի առօրյան>>
4) <<Իմ հայրիկի մասնագիտությունը>>, <<Իմ սիրած տարվա եղանակը>>, <<Մեր ընտանիքի կիրակին>>, <<Ինչ եմ երազում դառնալ>>

7 **Տրված 4 պնդումներից ո՞րն է ճիշտ: *(1 միավոր)***

1) Կարդալու հմտությունը ձևավորվում է 3 փուլով՝
   I. վերլուծական փուլ,
   II.համադրական փուլ,
   III.ավտոմատացված:
2) Կարդալու հմտությունը ձևավորվում է 4 փուլով՝
   I. նախապատրաստական ընթերցանություն,
   II. վերլուծական փուլ,
   III. համադրական փուլ,
   IV.իմաստավորման փուլ:
3) Կարդալու հմտությունը ձևավորվում է 3 փուլով՝
   I. վերլուծական-համադրական փուլ,
   II.համադրական փուլ,
   III.ամփոփիչ փուլ:
4) Կարդալու հմտությունը ձևավորվում է 3 փուլով՝
   I. նախապատրաստական փուլ,
   II.համադրական փուլ,
   III.ավտոմատացված փուլ:

8 **Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն խմբերի համարները, որանց բոլոր բառերը հոմանիշ են փակագծերում տրված՝ օրվա պահ անվանող բառին:**
(1 միավոր)

1. վաղորդայն, արշալույս, ծեգ *(առավոտ)*
2. ճաշաժամ, աղջամուրջ, միջօրե *(կեսօր)*
3. իրիկուն, մթնշաղ, մայրամուտ *(երեկո)*
4. իրիկնադեմ արևամուտ իրիկնաշաղ *(գիշեր)*

1) 1 և 2
2) 2 և 3
3) 3 և 4
4) 1 և 4

9 **Ո՞ր տարբերակում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա: *(1 միավոր)***

1) ցամաք ձորի աղվես-հյուծված, գլխի տակ փափուկ բարձ դնել-սուտ խոստումներով հանգստացնել
2) անմեղ գառ-միամիտ, ավազի վրա տուն շինել-անհիմն գործ անել
3) գրպանը ծակ-աղքատ, ընչազուրկ, լեզուն շաղ տալ-մեկին սպառնալ
4) բոստանը քար գցել-ոչ ուղղակի ճանապարհով մեկի հասցեին չարախոսել

10 **Տրված 6 պնդումից 2-ում սխալ կա: Նշել դրանց համարները:** ***(2 միավոր)***

1. Առաջին դասարանում նոր հնչյուն-տառերի ուսուցումը պիտի սկսել անծանոթ տառերի ձեռագիրը ծանոթների հետ համեմատելով, նրանց նմանություններն ու տարբերությունները որոշելով, տառամասնիկների կապակցման ձևերը յուրացնելով, հետո նորածանոթ տառերի հնչյուններն արտասանելով:

2. Առաջին դասարանում անծանոթ հնչյուն-տառերի ուսուցման ժամանակ սովորողները նախ պիտի ընկալեն տվյալ տառի հնչյունը, կարողանան որոշել նրա տեղը բառի մեջ, հետո նոր ծանոթանան այդ հնչյունի տպագիր տառերին:

3. Հայերենի այբուբենի ոչ բոլոր տառերի ուսուցումն է սկսվում նրանց հնչյունների ընկալումից. կան տառեր, որոնց հնչյուններին աշակերտները ծանոթանում են տառապատկերը ճանաչելուց հետո:

4. Առաջին դասարանում հայերենի նոր հնչյուն-տառերի ծանոթությունն սկսվում է տվյալ հնչյունի ձեռագիր մեծատառի ու փոքրատառի ուսումնասիրությունից, հետո սովորում են արտասանել տվյալ տառի հնչյունը և որոշել նրա տեղը բառի մեջ:

5. Երկրորդ դասարանում իրականացվող ստեղծագործական արտագրության դեպքում գրատախտակին նախապես պիտի գրված լինի ոչ միայն արտագրվելիք նյութը, այլև առաջադրանքը, որպեսզի աշակերտներն իրենք մի քանի անգամ կարդան այն, հասկանան էությունը, որոշեն կատարման քայլաշարը:

6. Արտագրության բնագրի առաջադրանքը պիտի կարդան աշակերտները, մեկնաբանեն, քննարկեն կատարման քայլերը, հետո սկսեն արտագրել:

11 **Տրված տարբերակներից 2-ի բոլոր բառերի հոգնակին կազմվում է -ներ վերջավորությամբ: Նշել դրանց համարները:** ***(2 միավոր)***

1. ձեռագիր, հեռախոս, մատ
2. շոգեքարշ, հերթապահ, դավադիր
3. նամակագիր, հանքափոր, սնոտիապաշտ
4. ամսագիր, աշխատատեղ, հարս
5. վարագույր, ներդիր, դասագիրք
6. ավիաշարժիչ, թոռ, սունկ
7. լրաբեր, սեղան, միջնապատ

12 **Տարբերակներից 2-ում բաղադրյալ հատուկ անվան գրության սխալ *չկա:* Նշել դրանց համարները: *(2 միավոր)***

1. Պոլոզ Մուկուչ, Արևելյան Հայաստան, Հայրենական Մեծ պատերազմ
2. Սմբատ Տիեզերական, Ռուսաստանի Դաշնություն, <<Անդրանիկ զորավար>> կայարան
3. Գրիգոր Լուսավորիչ, Հայաստանի երգչախմբային ընկերություն, Իսպանիայի թագավորություն
4. Բրազիլիայի Դաշնային Հանրապետություն, Աշոտ Երկաթ, Հայաստանի Հանրապետություն
5. Հայաստանի հանրապետության պաշտպանության նախարարություն, Միջերկրական Ծով, Տիգրան Մեծ
6. Ներսես մեծ, <<Ալագյազի մանիներ>> պոեմը, Մովսես խորենացի

13 **Տրված շարքերից 2-ի բոլոր բառերը բացառական հոլովով դրված գոյականներ են: Նշել դրանց համարները: *(2 միավոր)***

1. քաղաքից, հայելուց, ցանցից
2. հնուց, բակից, ապակուց
3. դիցուհուց, հարգալից, առաստաղից
4. ծաղկից, առվից, մոխրափոշուց
5. առավոտից, բոլորից, հուզումնալից
6. ուղեկից, ճեմուղուց, խորանից
7. նախամարդուց, այգուց, դրկից
8. միջավայրից, զրուցակից, երկնքից

14 **Տրված պնդումներից 2-ում սխալ կա: Նշել դրանց համարները: *(2 միավոր)***

1. Վերջավորությունները և այլ մասնիկները, միանալով բառին, կազմում են տվյալ բառի զանազան բառաձևերը:

2. *Անբասիր* բառը գրվում է ն-ով, քանի որ ի տարբերություն ամբարտավան, ամբարիշտ բառերի՝ փոխառյալ բառ չէ. հայերենում ունենք *բասիր* արմատ:

3. Թվական արմատ ունեցող բոլոր բառերը թվական են:

4. Ածանցները, միանալով բառերին, կազմում են նոր բառեր:

5. Բայի ժամանակային ձևերի էությունը սովորողները բացահայտում են՝ խոսելու պահի համեմատությամբ գործողության կատարման ժամանակը որոշելով. բայի ժամանակը որոշելու հիմնական միջնորդը հարցն է:

15 **Տրված պնդումներից 2-ը սխալ են: Նշել դրանց համարները:** ***(2 միավոր)***

1. ***Ե-ն*** և ***ո-ն*** երկհնչյուն տառեր են, որոնց ուսուցումը պետք է կատարվի տառից դեպի հնչյունը գնացող հաջորդականությամբ:

2. <<Վանկ>> հասկացությունը գրաճանաչության նախայբբենական փուլում պետք է ուսումնասիրել միավանկ բառերի քննարկման ճանապարհով:

3. Գրաճանաչության նախայբբենական փուլում դիտարկվող նկար-բառերի մեջ պետք է անպայման ընդգրկել գաղտնավանկի <<ը>> ունեցող բառեր:

4. Գրաճանաչության ընթացքում պետք է աշակերտներին ծանոթացնել կետադրական նշաններին:

5. Երրորդ դասարանում պարզ ընդօրինակման արտագրություններ պիտի հաճախակի կատարել՝ ամրապնդելու համար հայերենի ուղղագրության և կետադրության ուղղությամբ աշակերտների գիտելիքներն ու կարողություն-ները:

16 **Տրված տարբերակներից 3-ում ուղղագրական սխալ չկա: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. փասյան, տրտմորեն, խոչնդոտ
2. ատամնաբույժ, կմախք, լուսնկա
3. խորշոմածածկ, առընչվել, փափագ
4. խաբկանք, հանապազօրյա, սփրթնել
5. ժանյակազարդ, վերընտրվել, իշայծյամ
6. խարտյաշ, ձյունահեղձ, Իսրայել
7. ցավալուկ, մթնկա, բարյացական
8. հապճեպ, կորնթարդ, ամբասիր

17 **Երկուական շարքեր պարունակող խմբերից 3-ի շարքերից յուրաքանչյուրում բոլոր բառերը միմյանց հոմանիշ են: Նշել այդ խմբերի համարները:** ***(3 միավոր)***

1. **I.** մաքուր, ականակիտ, զուլալ, հստակ
   II. թանձր, խիտ, հոծ, թավ
2. **I.** հայտնել, ծանուցել, ավերել, ծանոթանալ
   II. մտնել, ներխուժել, խցկվել, սողոսկել
3. **I.** պատյան, պարկուճ, պատիճ, բոժոժ
   II. դատարկ, թափուր, փուչ, ունայն
4. **I.** պտղաբեր, արգավանդ, բեղուն, բեղմնավոր
   II. կանգնեցնել, ընդմիջել, կասեցնել, հղել
5. **I.** խնդրել, աղաչել, թախանձել, հայցել
   II. զատել, առանձնացնել, կղզիացնել, մեկուսացնել
6. **I.** ժրաջան, ջանասեր, տքնաջան, փութաջան
   II. ուղարկել, առաքել, հղել, ծառանալ
7. **I.** բարձրանալ, մագլցել, սլանալ, ներխուժել
   II. գեղեցիկ, սիրուն, աղվոր, գույնզգույն

18 **Տրված պնդումներից 3-ում սխալ *չկա:* Նշել դրանց համարները: *(3 միավոր)***

1. Ըստ երանգի նախադասության տեսակների ուսումնասիրությունը պետք է կազմակերպել ոչ թե առանձին-առանձին, այլ դիտարկել միասին՝ մեկ բնագրի շուրջ աշխատանքի ճանապարհով՝ համեմատելով, համադրելով նրանց երանգները և կատարել եզրահանգումներ:

2. Ենթական և ստորոգյալը կարող են կազմել բառակապակցություն, որովհետև նրանք հավասարազոր անդամներ չեն:

3. Նորածանոթ տառը գրելու կարողության զարգացումն սկսվում է մասնիկների գրության ուսուցումից: Անհրաժեշտ է տառի մասնիկները մեկ-երկու տող գրել, ապա անցնել նոր տառի գրությանը:

4. Կարդալու նախնական կարողության զարգացման գործընթացում որքան աշակերտների հնչյունային լսողությունը զարգացած է, այնքան կարդալիս և գրելիս նրանք քիչ սխալներ թույլ կտան:

5. Լեզվական նախագիտելիքների ուսումնասիրության փուլում աշակերտները ծանոթանում են նախ առարկա ցույց տվող, հետո՝ առարկայի գործողություն, ապա՝ առարկայի հատկանիշ ցույց տվող բառերի առանձնահատկություններին:

6. Լեզվական վարժությունների առաջադրանքները պիտի նախ կարդա ուսուցիչը, քննարկի աշակերտների հետ, ապա հանձնարարի կատարել:

7. Որպեսզի աշակերտներն ըմբռնեն նույնարմատ բառերի միջև գոյություն ունեցող իմաստային տարբերություններն ու ընդհանրությունները, շահեկան չէ դրանք դիտարկել իբրև առանձին բառեր, ապա աշակերտներին առաջարկել գործածել նախադասությունների մեջ և կապակցված խոսքում:

19 **Տրված նախադասություններից երեքում կետադրական սխալ *չկա:* Նշել դրանց համարները: *(3 միավոր)***

1. Առաջին անգամ, երբ սկսեցի դպրոցում ծանոթանալ Հին Հունաստանի և Բյուզանդիայի պատմությանը, հելլենների՝ Արևելք կատարած աշխարհացունց արշավանքներին, պարսից պատերազմներին՝ ահասարսուռ մատյան գնդերով, ավելի սիրեցի մեր փողոցը:

2. Ինձ թվում էր հռոմեական լեգեոնները, պարսկական զորքերն անցնում են աչքերիս առջևով, և լսում էի խելահեղ վարգող երիվարների սարսափ ներշնչող խրխնջյունը, սմբակների՝ գետինը դղրդացնող դոփյունը, տեգերի, գեղարդների շառաչյունը:

3. Մեկը մռթմռթում էր ինքնիրեն, մյուսը՝ ինքն իրեն ձաղկում՝քաղաքի՝ մարդու գլուխ պտտեցնող խառնիճաղանջության և իրարանցման մեջ շփոթվելու, առևտրի ժամանակ խաբվելու համար:

4. Մեկը թավ էր վրնջում, մյուսը՝ արծաթահնչյուն, երրորդը բարձրանալով հետևի ոտքերի վրա, ձգում էր սանձը՝ չցանկանալով իջնել այդ անվերադարձ ուղիով:

5. Փչում էր մեղմ հովիկը, ծաղիկները ժպտում էին, դալար խոտաբույսերը ծփում ու ծածանվում էին, և դաշտի խաղաղ տարածությունը օրորվում էր սքանչելի ալեկոծությամբ:

6. Անձրևին հաջորդում է պայծառ արևը. այդպես է լինում նաև մարդու կյանքում լաց ու ծիծաղ հաջորդում են իրար:

7. Ես մտրակի ծայրով զարկում էի ծառերի տերևներին և գիշերվա ցողը անձրևի նման թափվում էր ինձ վրա:

20 **Տրված շարքերից 3-ում բոլոր անձնական դերանունները համապատասխանում են փակագծերում տրված բնորոշմանը: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. ես, մեզնով, նրանցից, իրեն, ձեր, իմ *(խոսակից անձ)*
2. նրանք, իրենք, մենք, ձեզ, ինձնից, քեզնով *(խոսող անձ)*
3. դուք, ձեզնից, քո, ես, իր, քեզնով, յուր *(խոսակից անձ)*
4. քեզնից, իրենց, մենք, քո, նրանցից, նրանցով *(երրորդ անձ՝ ո՛չ խոսող և ո՛չ խոսակից)*
5. դուք, ձեզանից, ձեր, ձեզնով, ինքներդ, ձեր *(խոսակից անձ)*
6. մենք, դու, իրեն, նրանից, ձեզնով, ինձ *(երրորդ անձ՝ ո՛չ խոսող և ո՛չ խոսակից)*
7. ես, նրանից, դուք, ձեր, ձեզնով, քեզ *(խոսող անձ)*
8. նրան, յուր, նրանից, իրենով, նա, ինքը, իր *(երրորդ անձ՝ ո՛չ խոսող և ո՛չ խոսակից)*
9. ես, ինձնից, ինձնով, ինքս, իմ, ինձ *(խոսող անձ)*

Մաթեմատիկա

Ընտրովի պատասխաններով առաջադրանքներ

21 **Տրված թվերից ո՞րն է բաղկացած երրորդ դասի ութ միավորից և երկրորդ դասի չորս հարյուր միավորից:** ***(1 միավոր)***

1) 8400
2) 8400000
3) 800400000
4) 400000008

22 **Քանի՞ տասնյակ և քանի՞ հարյուրյակ է պարունակում տրված թիվը՝ 622015:** ***(1 միավոր)***

1) 6220 տասնյակ և 622 հարյուրյակ
2) 62201 տասնյակ և 0 հարյուրյակ
3) 62201 տասնյակ և 6220 հարյուրյակ
4) 1 տասնյակ և 0 հարյուրյակ

23 **Թվի 1/5 մասը հավասար է 400-ի: Ինչի՞ է հավասար այդ թվի հնգապատիկը:** ***(1 միավոր)***

1) 400
2) 10000
3) 1000
4) 50000

24 **Ո՞ր շարքի բոլոր հասկացություններն են մեծություններ:** ***(1 միավոր)***

1) ժամանակ, քառակուսի-սանտիմետր, տարողություն
2) զանգված, երկարություն, արագություն
3) մակերես, զանգված, մետր
4) վայրկյան, մակերես, ժամանակ

25 **Տրված թվային արտահայտությունները ո՞ր տարբերակում են ճիշտ համապատասխանեցված իրենց բնութագրիչներին:** ***(1 միավոր)***

1. 574-257
2. 745-324
3. 547-264
4. 748-347

Ա. Նվազելիի միավորների կարգի միավորը փոքր է հանելիի համապատասխան կարգի միավորից:
Բ. Նվազելիի կարգային թվանշանները մեծ են հանելիի համապատասխան կարգային թվանշաններից:
Գ. Նվազելիի տասնավորը փոքր չէ հանելիի համապատասխան կարգի միավորների քանակն արտահայտող թվից:
Դ. Նվազելիի երկրորդ կարգային գումարելին հանելիի համապատասխան կարգային միավորից մեծ է:

1) 1-ա, 2-բ, 3-դ, 4-գ
2) 1-ա, 2-գ, 3-դ, 4-բ
3) 1-ա, 2-բ, 3-գ, 4-դ
4) 1-ա, 2-դ, 3-գ, 4-բ

26 **10-ի սահմանում գումարման և հանման գործողությունների ուսուցման տեսական գիտելիքները ո՞ր տարբերակում են ճիշտ համապատասխանեցված տրված աղյուսակային դեպքերին:** ***(1 միավոր)***

1. Գումարման տեղափոխական հատկություն:
2. Թվաբանական գործողության իմաստի մեկնաբանում:
3. Բնական թվերի շարքի կառուցման սկզբունք:
4. Թվաբանական գործողությունների բաղադրիչների և արդյունքի միջև եղած կապ:

Ա. □±2; □±3; □±4
Բ. □ -5; □ -6; □ -7; □ -8; □ -9;
Գ. □±1
Դ. □+5; □+6; □+7; □+8; □+9

1) 1-ա, 2-բ, 3-գ, 4-գ
2) 1-ա, 2-գ, 3-գ, 4-բ
3) 1-դ, 2-ա, 3-գ, 4-բ,
4) 1-դ, 2-գ, 3-ա, 4-բ

27 Որոշել տրված խնդրի տիպը /տեսակը/: *(1 միավոր)*

A և B վայրերից իրար ընդառաջ միաժամանակ դուրս եկան երկու ավտոմեքենա և հանդիպեցին: Առաջին ավտոմեքենան շարժվում էր 60կմ/ժ արագությամբ, իսկ երկրորդը՝ 80կմ/ժ: Որոշել ավտոմեքենաների միջև եղած հեռավորությունը հանդիպումից 1 ժամ հետո:

1) Ավելորդ տվյալով խնդիր;
2) Պակասող տվյալով խնդիր;
3) Շարժման վերաբերյալ խնդիր, որն ունի լուծում;
4) Շարժման վերաբերյալ խնդիր, որը լուծում չունի

Կարճ պատասխաններով առաջադրանքներ

28 Տրված է խնդիր: *(4 միավոր)*

A և B վայրերից իրար ընդառաջ միաժամանակ դուրս եկան երկու ավտոմեքենա: A վայրից դուրս եկած ավտոմեքենան շարժվում էր 85կմ/ժ արագությամբ, իսկ B վայրից դուրս եկած ավտոմեքենան՝ 90կմ/ժ: Շարժվելուց 3 ժամ հետո նրանք հանդիպեցին:

Հաշվել՝

1. Ավտոմեքենաների միջև եղած հեռավորությունը հանդիպումից 1 ժամ հետո:
2. Հանդիպումից 2 ժ հետո B վայրից դուրս եկած ավտոմեքենայի հեռավորությունը A վայրից:
3. Հանդիպումից 1 ժ հետո A վայրից դուրս եկած ավտոմեքենայի հեռավորությունը B վայրից:
4. A և B վայրերի միջև հեռավորության եռապատիկի և A և B վայրերի միջև հեռավորության 1/3-ի տարբերությունը:

29 **Նշված տեսական դրույթներից 2-ը ընկած 36+20=(30+6)+20= (30+20)+6=50+6=56 առաջադրանքի կատարման հիմքում: Նշել դրանց համարները:** ***(2 միավոր)***

1. Թվի ներկայացում հարմար գումարելիների գումարի տեսքով:
2. Կլոր թվերի գումարում՝ միանիշ թվերի գումարման աղյուսակային դեպքերի հենքի վրա:
3. Թվին գումարի ավելացում:
4. Թվի տասնորդական գրառում:
5. Թվաբանական գործողությունների բաղադրիչների և արդյունքի միջև կապ:
6. Բաշխական հատկություն:

30 **Տրված տեսական գիտելիքներից/կարողություններից/ 2-ը ընկած են «30-7» տեսքի օրինակի լուծման հիմքում: Նշել դրանց համարները:** ***(2 միավոր)***

1. Թիվը կարգային գումարելիների գումարի տեսքով ներկայացնելու կարողություն:
2. Թվից գումար հանելու հաշվեկանոնի կիրառում:
3. Թիվը հարմար գումարելիների գումարի տեսքով ներկայացնելու կարողություն:
4. Բաշխական հատկություն:
5. Հանման աղյուսակային դեպքերի իմացություն:
6. Տեղափոխական հատկություն:

31 **Կարգային անցումով 20-ից մեծ երկնիշ թվից միանիշ թվի հանման բանավոր դեպքն ընդգրկում է տրված հաշվողական գործողություններից 2-ը: Նշել դրանց համարները:** ***(2 միավոր)***

1. Միանիշ թվի կազմության հարմար տարբերակի ընտրում:
2. Նվազելիի ներկայացում կարգային գումարելիների գումարի տեսքով:
3. Նվազելիի ներկայացում հարմար գումարելիների գումարի տեսքով:
4. Կարգային առաջին գումարելիից միանիշ թվի հանում:
5. Նվազելիի կարգային գումարելիից մեկ տասնյակի առանձնացում
6. 10-ին միավորների ավելացում:
7. Ստացված տարբերությանը կարգային երկրորդ գումարելիի ավելացում:
8. Թվի տասնորդական գրառում:

32 **Հետևյալ խնդրի լուծումը հենված է տրված տեսական գիտելիքներից 2-ի վրա: Նշել դրանց համարները:** ***(2 միավոր)***

«Մի ափսեում կար 5 խնձոր, իսկ մյուսում 5-ով ավելի: Քանի՞ խնձոր կար երկրորդ ափսեում»:

1. Տրվածին հավասար բազմության համալրումը մի քանի տարրով:
2. Նույնազոր բազմությունների տարբերություն:
3. Երկու բազմությունների հատում:
4. Բազմության տրոհում հատվող ենթաբազմությունների:
5. Տրվածին հավասարազոր բազմության համալրումը տարրերով:
6. Բազմության տրոհում չհատվող ենթաբազմությունների:

33 **«24•3=(20+4)•3=20•3+4•3=60+12=72» տեսքի օրինակի լուծման հիմքում ընկած տեսական գիտելիքներից/կարողություններից/ 2-ը սխալ են: Նշել դրանց համարները:** ***(2 միավոր)***

1. Արտադրիչների ներկայացում կարգային գումարելիների գումարի տեսքով:
2. Կարգային գումարելիների գումար:
3. Գումարը թվով բազմապատկելու հաշվեկանոն:
4. Բազմապատկման աղյուսակային դեպքեր:
5. Կլոր տասնյակների բազմապատկում:
6. Կարգային գումարելիների բազմապատկում թվով:
7. Տեղափոխական հատկություն:

34 **Կարգային անցումով միանիշ թվերի գումարման բանավոր հնարը իր մեջ ներառում է տրված գործողություններից 3-ը: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. Առաջին գումարելիի ներկայացում կարգային գումարելիների գումարի տեսքով:
2. Թվի տասնորդական գրառում:
3. Մեծ գումարելիի լրացումը մինչև մոտակա կլոր տասնյակ:
4. Միանիշ թվերից մեկի ներկայացումը հարմար գումարելիների գումարի տեսքով:
5. Գումարման տեղափոխական հատկության կիրառում:
6. Գումարման զուգորդական հատկության կիրառում:
7. Թվաբանական գործողությունների բաղադրիչների միջև կապ:
8. Թվաբանական գործողությունների բաղադրիչների և արդյունքի միջև կապ:

35 **Տրված պատկերում յուրաքանչյուր վանդակը 3մ և 4մ կողմերով ուղղանկյուն է: Պատկերի վերաբերյալ տրված պնդումներից 3-ը ճիշտ են: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

1. Պատկերի մակերեսը հավասար է 180 քառակուսի- մետրի:
2. Պատկերի մակերեսը հավասար է 180 մետրի:
3. Պատկերում 1 քառակուսի մետրը տեղավորվում է 180 անգամ:
4. Պատկերը բաղկացած է 12 մ կողմով 15 քառակուսիներից:
5. Պատկերում 1 մետր կողմով քառակուսին տեղավորվում է 180 անգամ:
6. Պատկերի մակերեսը հավասար է 15 քառակուսի մետրի:
7. Պատկերի մակերեսի թվային արժեքը 180 քառակուսի-մետր է:
8. Պատկերում 9 մետր կողմով քառակուսին տեղավորվում է 20 անգամ:
9. Պատկերը բաղկացած է 12 քառակուսի մետր կողմով 15 ուղղանկյուններից:

36 **Տրված արտահայտության վերաբերյալ պնդումներից 3-ը կեղծ են: Նշել դրանց համարները:** ***(3 միավոր)***

Քառակուսու կողմը 6 անգամ մեծացնելիս `

1. Պարագիծը կմեծանա 24 անգամ:
2. Մակերեսը կմեծանա 6 անգամ:
3. Պարագիծը կփոփոխվի 6 անգամ:
4. Մակերեսը կմեծանա 12անգամ:
5. Պարագիծը կմեծանա 12 միավորով:
6. Մակերեսը կփոփոխվի 36 անգամ:

Ես և շրջակա աշխարհը

37 **Ընտրի՛ր ճիշտ պնդումը՝**

1) «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված պետական պարտադիր առարկա է 2-4-րդ դասարանների համար:
2) «Ես և շրջակա աշխարհը» պետական պարտադիր ուսումնական բնագավառ է 2-4-րդ դասարանների համար:
3) «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված պետական պարտադիր ուսումնական բնագավառ է 2-4-րդ դասարանների համար:
4) «Ես և շրջակա աշխարհը» ոչ ինտեգրված պարտադիր առարկա է 2-4-րդ դասարանների համար:

38 **Ինչե՞րն են օվկիանոսների առանձին մասերը.**

1) գետերը
2) ծովերը
3) լճերը
4) Նշված բոլոր պատասխանների ճիշտ են:

39 **Հողի գույնը կախված է՝**

1) Ջրի առկայությունից:
2) Հումուսի քանակից:
3) Տվյալ տարածաշրջանի կլիմայից:
4) Քայքայված ապարների քանակից:

40 **Համապատասխանեցնել, թե որ ծովը որ օվկիանոսին է պատկանում.**

ա) Սպիտակ ծով	1. Խաղաղ օվկիանոս
բ) Կարմիր ծով	2. Ատլանտյան օվկիանոս
գ) Դեղին ծով	3. Հյուսիսային սառուցյալ օվկիանոս
	4. Հնդկական օվկիանոս